



ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ԴԻՄՆԱԴՐԱՄ

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ 2021-2025



ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

ՈԱԱԿ-ն իր երախտագիտությունն է հայտնում իր բոլոր շահակիցներին մասնավորապես՝ մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈւՀ) ղեկավարներին և ներկայացուցիչներին, ուսանողներին, գործատուներին, փորձագետներին, ներկա և նախկին աշխատակիցներին, հավատարմագրման հանձնաժողովի և հոգաբարձուների խորհրդի անդամներին, ովքեր մասնակիցը դարձան նախորդ ռազմավարական ծրագրի իրագործման և առաջիկա տարիների ռազմավարական ուղղությունների ուղենշման գործում: Լիահույս ենք, որ կշարունակվի մեր շահակիցների հետ սերտ ու արդյունավետ համագործակցությունը:

ՈԱԱԿ-ը հատուկ երախտագիտություն է հայտնում իր միջազգային խորհրդատուներին և արտաքին գնահատում իրականացրած փորձագետներին, ում ներդրումն անգնահատելի է ՈԱԱԿ-ի զարգացման գործում:

ՆԱԽԱԲԱՆ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիրը մշակվել է 2020 թ.-ին, սակայն հիմնված է ՈԱԱԿ-ի ողջ գործունեության ընթացքում շահակիցների և փորձագետների հետ շփումների, ինչպես նաև կուտակված փորձի վրա: Հարափոփոխ միջավայրը ՀՀ-ում և ամբողջ աշխարհում պահանջում է առավել ինտենսիվ բարեփոխումների իրականացում մասնագիտական կրթական համակարգում: ՈԱԱԿ-ի 2021-2025 թթ. ռազմավարությունը միտված է աջակցելու որակի շարունակական բարելավմանը և որակի մշակույթի տարածմանը մասնագիտական կրթական համակարգում՝ մարտահրավերներին դիմակայելու նպատակով: Այն հիմնված է հինգ գերակա արժեքների՝ **վստահության, նորարարության, հավասարության, հաշվետվողականության և փոխգործակցության** վրա, որոնք բխում են ՈԱԱԿ-ի գործունեությունից:

ՈԱԱԿ-ի ռազմավարությունը խթանելու է ՄՈՒՀ-երի կողմից որակի շարունակական ապահովումը, իսկ մոտեցումներ ընտրելիս ու գործողություններ ձեռնարկելիս ՈԱԱԿ-ն առաջնորդվելու է այն համոզմունքով, որ ՄՈՒՀ-երը հետամուտ են կրթության որակի ապահովմանը և իրականացնում են շրջափուլային բերավալում:

ՈԱԱԿ 2021-2025 թթ. ռազմավարական ծրագիրը իրագործվելու է ծրագրին կից ճանապարհային քարտեզով:

**1. ՈԱԱԿ 2021-2025ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ,
ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԸ**

Մեր առաքելությունը

ՈԱԱԿ-ը խթանում է որակի շարունակական բարելավումը մասնագիտական կրթական համակարգում՝ նպաստելով ինքնավարությանը և հաշվետվողականությանը:

Մեր տեսլականը

ՈԱԱԿ-ը մասնագիտական կրթության որակի լիարժեք երաշխավորն է Հայաստանի Հանրապետությունում:

Մեր արժեքները

Վստահությունը, Նորարարությունը, Հավասարությունը, Հաշվետվողականությունը, Փոխգործակցությունը:

**2. ՈԱԱԿ 2021-2025ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԻՆ ՀԱՄՆԵԼՈՒ
ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

Մինչև 2025 թ. տեսլականին հասնելու համար ՈԱԱԿ-ը պահպանելու է մասնագիտական կրթության որակի վստահելի և լիարժեք երաշխավորի իր դիրքը Հայաստանի Հանրապետությունում՝ առաջնորդվելով.

- 1) մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսմամբ և ամրապնդմամբ,
- 2) ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացմամբ,
- 3) շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցմամբ ու համագործակցությամբ,
- 4) կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահունչության ապահովմամբ,
- 5) միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածմամբ,
- 6) ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացմամբ՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները:

Նպատակ 1. Մասնագիտական կրթության որակի շարունակական բարելավման մշակույթի խրախուսում և ամրապնդում.

- Վերապատրաստումներով և որակի արտաքին գնահատման գործընթացներով նպաստել ուսուցման որակի բարելավանը ՀՀ բոլոր ՄՈՒՀ-երում:
- Մասնագիտական կրթական համակարգի մասին վստահելի տեղեկատվության հավաքագրմամբ և տարածմամբ՝ ապահովելով փորձագիտական գնահատումների և ընթացիկ հավատարմագրումների հավաստիությունը:
- Խթանել մասնագիտական ոլորտում լավագույն փորձի տարածումը և խրախուսել մասնագիտական կրթության նորարարությունը:

Հաջողության չափանիշներ.

- ՈԱԱԿ-ի իրականացրած գործընթացները/մատուցած ծառայությունները ճանաչվում են որպես վստահելի աղբյուր և հանդիսանում են ուղեցույց մասնագիտական կրթություն տրամադրողների համար որակի շարունակական մշակույթի խրախուսաման և ամրապնդման համար:

Նպատակ 2. ՀՀ-ում փորձագիտական կարողությունների շարունակական զարգացում.

- Փորձագետների հավաքագրման քաղականության իրականացմամբ խթանել բոլոր ոլորտների մասնագետների փորձագիտական կարողությունների զարգացումը՝ համագործակցելով ոլորտային ՄՈՒՀ-երի և գործատուների հետ:
- Շարունակական վերապատրաստումների միջոցով հարստացնել ՈԱԱԿ-ի փորձագետներին բազան՝ թիրախավորելով մասնագիտական կրթության բոլոր մակարդակները:
- Ընդլայնել ուսանող-փորձագետների պատրաստման շրջանակը՝ նպաստելով որակի արտաքին և ներքին գործընթացների մասին բավարար իրազեկվածությանը:

Հաջողության չափանիշներ.

- Մասնագիտական կրթության խնդիրների և ուսանողների կարիքների վերաբերյալ հետազոտական հենքը մեծացել է:
- Ծրագրային հավատարմագրման գործընթացներն իրականացնելու համար առկա են բավարար քանակի մասնագետներ:

Նպատակ 3. Շահակիցների հետ նախաձեռնողական (proactive) և շարունակական հաղորդակցում ու համագործակցություն.

- Շարունակական նախաձեռնողական հաղորդակցության միջոցով մեծացնել շահակիցների հետ կապերը՝ ներառյալ գործատուներ, ուսանողներ, դասախոսներ և ոլորտի փորձագետներ՝ խթանելու նրանց ներգրավվածությանը կրթության որակի բարելավման գործընթացներում:

Հաջողության չափանիշներ.

- Կրթության որակի մշակույթի շուրջ շահակիցների տարբեր խմբերի միջև հաղորդակցության և համագործակցության մեծացում:

Նպատակ 4. Կրթության որակի ձևավորման համար գործող իրավակարգավորումների համահնչության ապահովում.

- Տեղական և միջազգային օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունների և թեմատիկ վերլուծությունների արդյունքում գործող իրավակարգավորումների համահնչեցում ՀՀ օրենսդրությանը և միջազգային պահանջներին,
- Ապահովել հիմնական դերակատարում ՀՀ Որակի ապահովման շրջանակի մշակման և իրականացման մեջ՝ համահունչ լինելով գործող և մշակվող իրավակարգավորումներին:

Հաջողության չափանիշներ.

- Տարեկան կտրվածքով հրապարակվում են թեմատիկ վերլուծություններ, հաշվետվություններ:
- Շահակիցները բավավարված են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացներից և դրանց իրավակարգավորումներից:

Նպատակ 5. Միջազգային լավագույն փորձի և մշակույթի տարածում.

- Մասնագիտական կրթության որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցության և օտարերկրյա գործակալությունների հետ համագործակցությունը խորացնելու և լավագույն փորձի միջոցով ամրապնդել միջազգային գործընկերությունը:
- Հաշվի առնելով հայկական սփյուռքի ներուժը՝ նպաստել առաջատար ՄՈՒՀ-երում կրթություն ստացած մարդկանց փորձի փոխանցմանը:

Հաջողության չափանիշներ.

- ՈԱԱԿ-ի գործընթացները ճանաչվում են շահակիցների կողմից՝ որպես միջազգային լավագույն փորձի տարածման աղբյուր:
- ՈԱԱԿ-ը 2021-2022 թթ. հաջողությամբ պահպանելու է Եվրոպական բարձրագույն կրթության ասոցացիայի անդամակցությունը և Եվրոպական ռեզիստում ընդգրկվածությունը:

Նպատակ 6. ՈԱԱԿ-ի կարողությունների շարունակական զարգացում՝ կարևորելով սովորող կազմակերպության սկզբունքները.

- Ուժեղացնել կազմակերպության որակի ներքին ապահովման համակարգի կարողությունները:
- Իրականացնել հավատարմագրման գործընթացն իրականացնող մասնագետների և աշխատակազմի կարողությունների շարունակական զարգացում:
- Ամրապնդել ֆինանսական կայունությունը:

Հաջողության չափանիշներ.

- ՈԱԱԿ-ի աշխատակազմի բոլոր ներկայացուցիչները կիսելու են ՈԱԱԿ-ի ապագայի նկատմամբ ընդհանուր տեսլականը:
- ՈԱԱԿ-ը կդառնա գրավիչ գործատու՝ ներգրավելով կրթության ոլորտի լավագույն փորձագետներին իր տարբեր նախագծերում՝ ապահովելով ճկուն կառավարման քաղաքականություն:

3. ՈԱԱԿ 2021-2025ԹԹ. ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Վստահություն. ՈԱԱԿ-ն իր գործունեությամբ ձգտում է երաշխավորել հանրության վստահությունը մասնագիտական կրթության հանդեպ:

Նորարարություն. ՈԱԱԿ-ն իր գործունեությամբ խթանում է նորարարությունը բարձրագույն և միջին մասնագիտական կրթական համակարգում:

Հավասարություն. ՈԱԱԿ-ը ջանում է ապահովել հավասար հնարավորություններ մասնագիտական կրթության ոլորտի բոլոր շահակիցների համար:

Հաշվետվողականություն. ՈԱԱԿ-ն ապահովում է հաշվետվողականություն իր բոլոր շահակիցների համար:

Փոխգործակցություն. ՈԱԱԿ-ն իր նպատակներին հասնելու համար համագործակցում է բոլոր շահակիցների հետ:

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ս.ԿԱՐԱԲԵԿՅԱՆ